

ՃՈՂՈՎՐԴԻ ՄԷԶ

ՎԵՊ Պ. ՌՕԶԷԳՒՅԻՐԻ

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

Պետրոս Պօղոսի տօնի օրը

Ակսօր մի քանի խօսք պիտի ասեմ իբրև յաւելուած անցեալ նամակին: «Վարազր», կամ ինչպէս ալժմ կանչում են նրան, կլէմէնսօր, սաստիկ հիւանդացաւ հարինքով: Նա պարկած է իր մօր Մարէնցէլ պառակի մօտ, որ, ասում են, չափազանց վիրաւորուած է Աղամի ընտանիքից: Նա ասում է, որ Ռօխէրլին լաւ սպեղանի տուեց—եթէ ալդ չինէր նրա ծեռքը կկտրէին, —իսկ սրա փոխարէն չար տղան կլէմենսին փոկեց մի հեռաւոր խրճիթում, այնպէս որ սիրելի տղան քիչ էր մնում սովոր մեռնէր և ալժմ էլ հազիւ թէ կենդանի ֆնաց:

Ակսօր ճաշից լետոյ ճնողները հարցաքննեցին Ռօխէրլին: —Ինչեր ասես որ մարդիկ չեն խօսում քո մասին, Ռօխէրլ, ասաց հալրը.—Ես գիտեմ, որ ալս բոլորը նիշտ չեն: Ո՞վ կանէ ալդպիսի կատակներ:

Ռօխէրլը պատասխանեց: —Եւ ինչի՞ն չի կարող ճշմարիտ լինել ալդ: Շատ ուղիղ է:

—Տէր թիսուս, աղաղակեց մալրը: —Միթէ ճշմարիտ դու փակեցիր տղալին անտառի տնակում: Եւ քիչ ֆնաց սովամահ արիր նրան: Ինչո՞ւ է, ինչո՞ւ, դու Աստծուց մոռացուած մարդ:

Ռօխէրլը իր շուրջը նայեց, նայեց Բարբէլին, հօրը, մօրը և պատասխանեց: Այդ ես չեմ կարող ասել:

Մարէնցելը ամեն տեղ գոռում է, թէ քո կտելից գաղտնի ոստիկաններ կուղարէէ: Թետոյ դու ստիպուած կինիս բանտը նստել կլէմենսից աւելի երկար ժամանակ:

Ռօխէրլը միայն ուսերը վեր քաշեց:

Աւելի ուշ ես նրան ասացի, որ նա չպէտք է խօստովանէր այդ աստիճան զարհութելի մեղադրանքի հշմարիտ լինելը: Նա բարկացաւ և աղաղակեց: — Թիմար մի լինի: Դու լաւ գիտես, թէ ինչպէս կը գործը: Իժուար չէ նրանց առաջ արդարանալ, բայց չէ որ Բարդէլը պամոթից կիւտանդանայ, եթէ իմանայ այդ վիրաւորանքի մասին: Իսկ հայրս կարող է կաթուած ստանալ այս խրտութիւնից: Ինչով արդարանալ, աւելի լաւ է կերթամ այդ դադունի ոստիկանների հետ: Աղջարև, այս երիտասարդին արժէ համբութել:

Բայց ներկայումս այս գործը վերջացած է, և այն էլ դարձեալ Բարբելի շնորհիւ: Նա գնաց հիւանդ Կէմենսին այցելութիւն, և հարծութործ անելու, թէ ինչպէս է գործը պատահել: Տղայի մօտ հէնց այդ ժամանակ քահանան էր եկել նաշակը ձեռքին:

Հիւանդը մեկնեց նրան իր տաք ձեռքը և ներում խնդրեց: — Ես քեզ ներելու ոչինչ չունիմ: — Իսկ երեխան ձեռքին խրտութիւնի համար, որ քո լուսամտի մօտն է:

Այսպէս նա այդ մասին իմացաւ հէնց իրանից: Նա, ինչպէս ասում են, հանգիստ կերպով ընդունեց այդ և ձեռքը մեկնեց նրան. — Իմ կողմից հանգիստ կացիր, Կէմէնս: Ես իմ մասին պատասխան կտամ:

Իսկ վերադարձին եղբօրն ասաց. — Կէմէնսը քեզ ողջունում է և քեզանից ներումն է խնդրում: Նա քեզ ներեց:

Այժմ նրանք երկուսն էլ կցաւեն, եթէ «Վարազը» մեռնի: Մայրը նոյնպէս ամեն ինչ գիտէ, միան հալրը չէ հասկանում թէ ինչո՞ւ Ռօխէրլի գիտին փչեց աղային բանտարկել: Նա ուզում է Բարբէլին սարը ուղարկել, որ այդպիսով բուժէ նրա ծանծրովթը: Այս պարզահոգի Աղամ: Կէմ գիշեր է: Ձեռքերս դեռ դողում են, բայց և ալնպէս պէտք է որ այս մասին գրեմ քեզ...

Քեզ գրածն նամակը վերջացնելով, ես պէտք է յարդը տանէի փարախ: Նոյն բանը ես անում եմ երեքմատնեալ եղանով: Յանկարծ փաղում է ինձ վրայ Ռօխէրլը և ձեռքից դուրս կորչում եղանը: Նրա շրթունքներին սպիտակ փրփուր կալ, և

Նա եղանն ուղղում է դէպի, ինձ: Ես հաղիւ կարողացալ եղանը բոնել, և հարուածը յետ մղել:

— Ի՞նչ է պատահել քեզ, խենթ:

— Շուն, ես քեզ կմորթեմ, փրփրում է նա: Մեր մէջ մի ամ-
րող պատերազմ է սկսում եղանի պատճառով: Նրա միակ ծեռքը
այնպիսի ուժով է գործում, ինչպէս երեքը, մենք կուռմ ենք
երիու վազքերի նման, մինչև որ վերջապէս յաջողում է ինձ
եղանին տիրանալ:

— Այդ ի՞նչ է նշանակում, Ռօխէրլ:

— Իմ գիտենալու բանն է, ասում է նա, ատամները կրնակով:

— Թիսուսի անունով եմ երդւում, որ ես ոչինչ չեմ հաս-
կանում:

Նա դանդաղ կերպով և մտածելով արտասանեց: — Յիսուս սի
անունով: Չը գիտես... ուրեմն հարկաւոր է քեզ լիշեցներ:

— Այդքան խօսելու ի՞նչ կարիք կայ: Պարզ ասա էլի:

— Մի ծգծգի, Հանգէլ: Խոստովանիր, որ մեղաւոր ես: Նա...

Բայց ալժմ արդէն ես հասկացալ: — Նա դեռ չգիտէ այն,
ինչ որ ես դիտեմ: Բայց որտեղից էր նա իմացել:

— Եթէ որ ալդպէս է, եթէ դու այդ քանի մէջ ինձ
կասկածում ես, եթէ դու, նոյն իսկ առանց ինձնից ոչինչ բան
հարցնելու, ուզում էիր ինձ սպանել, ինձ ալլ ևս մէկ բան է
մնում: Իմ շնորհակալութիւնը հաղորդիր ծնողներիդ այն ամեն
բարիքի համար, ինչ որ նրանք արել են ինձ: Էգուց առաւտ
հալրդ կարող է ինձ չարթնացնել:

— Հեռանալը ամենից լարմար է, ասաց նա:

— Ռօխէրլ: Քեզ համար լաւ չէր լինի, եթէ ես ֆնալի...

Նա անհաստատ քալերով դուրս գնաց փարախից:

Այնուհետև ես սկսեցի իրերս հաւաքել և կապկապել:

— Այթէ ինչպէս պէտք է վերջանար այս գործը, մտածեցի
ես: Իսկ երբ կապոցս պատրաստ կապկապած էր, ես կանդնած էի
դուան մօտ, աչքերս աստղալից երկնքին յառած, նա նորից
երեաց բակում: Նա կանգ առաւ դռնից մի քանի քալլ հեռու
և հանդիսաւ հարցրեց: — դու ալստեղ ե՞ս: — Յետոյ մօտե-
ցաւ ինձ, ծեռքը մեկնեց: — Հանգէլ, ներիր ինձ: Ալժմ ես

ամեն բան գիտեմ... Թևա՛ մեղ մօտ; Թևա՛ Նա ընկաւ իմ վզով
և այնպէս դառը լաց եղաւ, այնպէս յուսահատ, որ ես պատ-
րաստ էի կարեկցելուց դետնի տակ մտնել:

— Ահա՛ թէ ինչի մասին պարտաւոր էի ես զրել ռեղ,
բարեկամ, այս անառալին դիշերս...

Քսաննեսօթերորդ կիրակի

— Ալժմ լաւ է, նշմարիտ: Վարսակը կանաչում է, հացն
արդէն բարձրացել է, շատ հասկեր մարդաբոյ են դառել, երր
դնում ես դաշտի միջի շաւղով, ծածանուող հասկերը այսերիդ
ծիծաղում են, իսկ նրանց քնքոյշ գոյնը մաղերի վրայ հետք
թողնում, և նրանց քաղցր հօտը մի տեսակ հրաշալի բոլով է
լցնում հոգին: Երր քամի է շնչում, արտը ալեկոծւում է, ինչ-
պէս մի կապտաւուն լին: Ակատեղ այնտեղ դաշտում վառւում է
կարմիր պուտի ծաղիկը կամ երևում են պայծառ կապոյտ...
բայց ալս սքանչելիքները գին չէ դնում իմ Աղամը—չէ որ
սրանք դաշտալին «խոտեր» են: Ամեն կողմ լաւում է արտոյտ-
ների երդի ծալնը, բայց նրանք իրանք չեն երևում, հասկերի
խառնթեան մէջ ճրճռում են ճպուռներու: Ի՞նչ բան է մեծ
քաղաքի ամբողջ շինծու բանաստեղծութիւնը համեմատելով սև
հացի դաշտի գեղեցկութեան հետ:

Այս օրերս մենք ստիպուած եղանք ցնցուել: բարձր սարերի
վրայ փոթորիկ էր: Սկզբում հովիտներում և անձաւներում
իշան մառախուղի սպիտակ շերտեր, լետոյ կամաց կամաց ներս
սպրցեցին հովիտներում մեծ մեծ ամպեր, և օդի մէջ այնպիսի
մի աղմուկ լսուեց, կարծես թէ հոկապական պարկերում ընկուղ-
ներ էին խրխռացնում: Սենեակի մէջ այնպէս մութն էր,
որ նոր վառած մոմը իր կարմիր փայլը արծակել էր պատի
վրայ, ինչպէս լինում է երեկոյեան: Ալս օրհնած մոմը վառում
են միշտ, երր որևէ վտանգ է սպառնում: Կտուրի վրայ կամաց
կամաց ալբում են ուռենու ճիւղերը — նրանք էլ լետ են մղում
դժբախտութիւնը:

Թխսկենու տակ կանգնած էր Բարբէլլը խաչելութիւնը ձեռին և կարծես զառանցանքի մէջ Յովհաննէս Աւետարանչից արտասանում էր սկզբի տուները։ Նրա դժգուն դէմքը փալլում էր շրջապատող խաւարի մէջ։ Ես նրան մօտեցալ։ — Բարբէլ, ասացի, ալժմ տուն գնա։ Նալիր, ճիւղերի միջից շշնչում է քամին։ Փոթորիկն իսկոյն հինգին հինգին արտուի...

— Թող ինձ, հանգէլ։ Ալստեղ լաւ է ինձ համար...

Մառախուղի քուլաները ցածրացան մեղանից ներքեւ։ Յանկարծ նրանց մէջ ճալթեց աչք կուրացնող մի պայծառ կալժակ։ Երբ որոտը որոտաց, ես լսեցի, թէ ինչպէս Բարբէլլը կրկնում էր կարծես քնի մէջ։

— Ալստեղ լաւ է։ Տէր, ընդունիր ալժմ ինձ։ Եւ բանը մարմին առաւ։

— Դեհ, արի, Բարբէլ։

Զեռները բարձրացրած նա կանգնած էր և նայում վերև, ուր շշնչում էին թխսկու ճիւղերը։ — Լսո՞ւմ ես այնտեղի սօսափիւնը։ Փոքրիկ երեխաները։ Տեսնո՞ւմ ես նրանց։ Տես նրանք նօնւում են և պարում։

— Երեխաներ։ Ո՞ւր են։

— Իսկ այնտեղ, կատարին թխսկին է։ Ճօնւում են և շշնչում։ Դրանք այն երեխաներն են, որոնք մեռել են մկրտուել։ լուց առաջ Խեղճ փոքրիկ հոգիներ։ Փոքրիկ դադաղում դարսած են դեռ ևս չժառանած ծաղիկներ։ Հոգիները պէտք է սպասեն այն սուրբ գիշերին, երբ Փրկիչը պիտի դալ...

Բայց լանկարծ վրայ տուեց հեղեղը, և ես Բարբէլի ձեռքից բռնած քաշ տուի տուն։ Նա զղածգարար երեսից դէն դցեց գզզուած մազերը և նայեց իւր շուրջ, կարծես քնից արթնացած։

Փոթորէից լետոյ ծառերը մայր մտնող արևի տակ փալլում էին, ապակէ շահերի նման։ — Ամեն մէկ խոտի վրալ կրտկ էր կախուած։ Իսկ հեռւում, սարերի վրայ ամեն ինչ սպիտակեց, ինչպէս ձմեռ...

Երեկ մեղ մօտ եկաւ շրջավաճառը։ Նա դաշտերը դիտեց, չափեց և հասկերը չհասած գնեց։ Իմ ծերուկը բե՛ն ստացաւ, որ հազիւ կբաւականանալ նրան հարկերը վճարելու,

բայց որը կկաշկանդէ նրան։ Փողի մեծ մասը կվճարուի նրան աշնան, եթէ հասկերը չվնասուին կարկտից, անձրևից, երաշաից, միջատներից և ալլն։ Մի խօսքով, եթէ հունձը լաւ լինի, շրջավաճառը փող կաշխատէ, իսկ եթէ վաս լինի—վնասը կիրէ Աղամը։ Ինչքան էլ ծերուկը զլուկը թափ տուեց, բայց և այնպէս ստիպուած եղաւ պալմանազիրը ստորագրելը Տանը կոպէկ փող չկայ։ Առաջ գեղջուկը էլի կարող էր անփող ապրել, որովհետեւ կարելի էր տանու միջոցներով բաւականութիւն աալ իր պէտքերին։ Այժմ ուրիշ ժամանակներ են։

Ինձ, եղներ լժած սալլակով, ուղարկեցին Հօլդէնդօրֆ ամեն տեսակ մթերքների, գործիքների և նորիսկ գեղերի համար։ Թացի դրանից, ես գնեցի նաւթի աման, որի դործածութիւնը ես ինքս սովորցրի։ Այժմ ես ցաւում եմ դրա վրայ նաւթ պէտք է դնել, իսկ լուցափալտ վառելը ոչինչ չարժէ։

Բայց ես ուրիշ բան էլ ուղում քեզ պատմել։

Նստած եմ սալլակի մէջ և քշում եմ եղները հօվտի միջով, և դեռ գովեստներ էլ եմ շրայլում նրանց հնաղանդութեան համար։ Առուակի վրալի կամրջով ենք անցնում—մէկ էլ տեսնես, կամրջի վրայ կանգնած է ուսուցիչը։ Չուկն է որսում։ Արդէն երկու սպիտակ փորով գեղարքունի էր բռնել և հարցնում է, թէ ես չէմ տանի ձկները հետս Աղամի տուն։

Սկզբում ես ուղեցի հրաժարուել և ասացի։ — Տես, Վինտէր, Կօնրադը ձեռքդ չվիրաւորէ (որսորդը հսկում է և իր շրային որսին)։

— Կօնրադն ալժմ սթափուեց։ Այն օրից, ինչ որ այս անրադտութիւնը պատահեց Ռօխէրին, նա .ամեն բանի վրայ նայում է մատների արանքով։

Սալլակս կանգնեցրի։ Ուսուցիչը սիդարէտ է առ աշարկում։

— Ալ թէ ինչ ես ծխում։

— Ոչ, ես չեմ ծխում. ինքդ ծխիր։

— Շնորհակալ եմ, պարոն ուսուցիչ։ Այդ ո՞րտեղից էք դտել ալդպիսի խոտ։

— Լանդտագի պատգամաւորը տուեց ինձ։

— Ուրեմն կուլմբօկը սիգարէտ է ծխում։

— Նու ասում է, թէ գիւղացին պէտք է իրան հպարտապահէ:
Մխախոար վերադարձնում եմ ուսուցչին: Չեմ ուզում
օդն ապականել:

— Ինչո՞ւ ինքդ վերև չես բերում քո ծկները, — հարցը ես:
— Խիստ շոգ է, նրա համար:
— Երեկոյին կարելի է գնալ Մինչև իսկ գիշերը կարելի է,
սկսում եմ ես:

Իմ ակնարկը ի զուր անցաւ:
— Մեզ մօտ վերևը ուրախ չէ այժմ, ասացի ես:
— Ի՞նչ է: Որևէ բան է պատահել:
— Այո, պատահել է, պատասխանեցի ես դանդաղ:
— Ինչ տեսակ ենք ես ու դու խօսում միմեանց հետ, ա-
սուց նա, իմ երեսին նայելով: Ակսր դու արդէն գիտես: Դու
շատ տարօրինակ ես, չանս:

— Իսկ ես քեզ չհասկացալ; Վիհնտէր: Ինչպէս աղնիւ մարդ,
դու պէտք է դիտենալիր, թէ ինչ պէտք էր անել այժմ:
— Ի՞նչ կարիք կալ այժմ ազնւութեան մասին խօսելու:
Աղնիւ մարդը չի փախչի:

Աղժմ արդէն մենք իսկոյն միմեանց կհասկանանք: Բացա-
տրուիր, Գվիդօ: Դու կարող ես պարզ խօսել մօր հետ: Հալրը,
ինձ թւում է, դեռ ոչինչ չէ կասկածում: Պէտք է վերին աս-
տիճանի զգոյշ ազդել: Նա սրտի հիւանդութիւն ունի:

— Մի՛թէ նա ոչինչ չէ իմանում:
— Նա մի ծեր երեխալ է:
— Ալդ դէպքում խղնուկ Բարբէլին աւելի վատ կլինի
դեռ յետոյ, ասաց նա ախ քաշելով: Յանկարծ նա հետեւեալ
խօսքերն է արծակում բերանից.

— Բարեկամ, քանի անդամ եմ անիծել ես այդ օրն ու ժամը:
— Ինչպէս ամեն մէկը, ով որ սիրում է:
— Ախ ալդ անիծեալ սէրը:

— Սիրելի, սէրը ամենեկին անէծքի արժանի չէ:
— Իրօք նու ամենեին այն չէ, ինչ որ թւում է սկզբում:
Գողունի մօտենում է ինչպէս մի հրեշտակ, — հեզ, անմեղ: Ին-
չո՞ւ միշտ ալսպէս չէ մնում:

—Եղները շարժուեցին—ես էի սանծերը ձգել: Սալլակը ճռնչաց, բայց ուսուցիչը գնում էր նրա կողքից, ձեռքով բռնած սալլակից: Նա ասում էր հանդարտ և արագ:

—Յիմարութիւն կինէր արդարանալ: Զէ՞ որ ես եմ մեղաւորը, միայն ես, ինձ համար բաւական չէր եղբայրական, բարեկամական լարաբերութիւնները: Կիրքը աննկատելի է ներս սպրդում, և առաջին լարմար դէպքում դեռ արդէն մօտդ է ու մօադ...

—Բայց վիկիսովիալութիւնը յետին թօւով չէ օգնում:

—Եթէ որ ես մենակ լինէի, մի խօսք էլ չէի ասի՞: Ուրախութեամբ կաանէի պատիժը:

—Ճշմարիտ որ: Եւան հրապուրեց Աղամին...

Եւան: Թո համեմատութիւնը ոչ մի տեղ չի պէտք գայ: Վասն այն է, որ օժը ես ինքս էի: Աղջիկն ալժմ նոյնպէս անմեղ է, ինչպէս և մի տարի առաջ: Բայց նա ստիպուած է տուժել. ուղղակի զարհուրելի է... կարծես թէ ես գողութիւն արի... ոչոքին այդպիսի բան չեմ ցանկանում:

—Աղդ ինձ ամենեին չէ հետաքրքրում, սիրելիօս: Այսօր ինձ համար հետաքրքրական է միայն մի բան իմանալ. Ե՞րբ ես դու մտադիր պատակուելու:

—Խոկ ես էլ քեզ եմ հարցնում: Արդեօք ամեն մէկ տղան, սիրելով մի օրիորդի, խսկոյն և եթ պսակւում է նրա վրայ: Եւ միթէ գեղջուկը, ամուսնանալով, կսկսի հարցնել իր կնոջ, թէ ինքը առաջինն է:

—Ի՞նչ ես դուքս տալիս, տաքացայ ես: —Ես կարծում եմ, Գվիդո, որ այս աղջկան չի կարելի համեմատել գիւղական ուրիշ աղջիկների հետ: Դա Աղամի գերդաստանն է, զրանք մի ուրիշ կերպ մարդիկ են, սիրելիս: Եթէ ես մի երիտասարդ իշխան լինէի, հլու կերպով կամուսնանայի այն գիւղական աղջկայ հետ: Այս, այս, նայիր ինձ վրայ: Դու գիտես արդէն, որ ես նրան սիրում եմ: Դեռ ևս իմ սէրը եղբայրական է—ինչպէս դու ես արտայալտում—բայց կարող է մի ուրիշ բանի փոխուել: Նա կարող է ոչ թէ բրոջ կերպարանք ընդունել այլ վրէժմառուի, հասկանում ես:

—Հանս, ինձ թւում է, որ դու ինձ անպէտքի մէկն ես
համարում:

Ես սալլակից վեր թռայ, ուսուցչին դժեցի գետնին.

—Պարզ ասա ինձ, պիտի պսակուե՞ս նրա վրայ թէ ոչ:
Ոյս թէ ոչ:

Նա այնքան էլ շփոթուած չէր, բայց պատասխանեց.—
Եթէ դու նշմարիտ ուղում էիր այդ իմանալ, սիրելի հանս,
կարող էիր ուրիշ կերպ հարցնել: Ստիպելով դու քիչ բան
կիմանաս: Եթէ որ ես քեզ պատասխանում եմ, այդ միայն նրա
համար, որ ցանկանում եմ քեզ պատասխանել...

Նա գրպանից ինչ որ թղթեր հանեց:—Մէկը՝ տեղական
ծխի թոյլտութիւնն էր պսակուելու համար: Միւսը դպրոցա-
կան իշխանութեան մերժութիւնն էր իրան մշտական ուսուցիչ հաս-
տատելու և իր ռոնիկն աւելացնելու:

Ես թղթերը վերադարձնում եմ նրան ու ասում.

—Այս է ուրեմն քո պատասխանները:—Բայց իմ ծայնը
էլ այնպէս ինքնախտահ կերպով չէ հնչում: Դժուար է պսա-
կուել և պառաւ մօրը պահել տարեկան երեք հարիւր գուշ-
դէնալի:

—Հէնց դրա համար էլ ես միշտ լետաձգում էի, ասաց
ուսուցիչը:—Բայց գործն այնուամենայնիւ լուրջ դորժ է: Ես
կպսակուեմ այն աղջկակ վրայ նոյն իսկ երեք հարիւր գուշէն
ունենալով:

—Լաւ: Ուրեմն վճռուած բան էր

—Հաստատ վճռուած:

—Բայց մէնք գեռ էլի կիսուենք այդ մասին: Դու արդէն
գիտես, որ ես քեզ բարեկամ եմ: Իսկ այժմ ես պէտք է եղնե-
րով սարը բարձրանամ: Մի բան էլ ասա ինձ, Գվիդո: Նա
երբ է սպասում:

—Մեպտեմբերի առաջին կէսին:

Քսան ու ութերորդ կիրակի.

Ես շատ եմ ուզում քեզ պատմել իմ գիտողութիւնները առանու կենդանիների կեանքի մասին, զլխաւորապէս եղների, կովերի, ոչխարների, խողերի, շների և հաւերի հոգեկան կեանքի մասին։ Երբ և իցէ ես ու դու մի գիրք կդրենք այդ մասին, ես փաստերը կհաղորդեմ, իսկ դու փիլիսոփայութիւններ կանես նրանում։ Ընտանի կենդանիները — դրանք նոյն մարդիկն են, նոյն ուրախութիւններով, տանշանքներով, նոյնպէս ընդունակ սիրելու և ատելու, հաւատալու, կասկածելու, երազելու... Միայն մեր փիլիսոփաներն են, որ նրանց կեանքը չեն հասկանում։

Բնական է, որ ռամիկները կենդանիների հետ այնպէս են վարւում, ինչպէս ընտանիքի անդամների հետ, սիրում են նրանց, ինչպէս կեանքի մշտական ընկերներին։ Իմ անխօս Ադամը չի կարող զսպել իրան, որ չխօսէ իր անսասունների հետ, ամբողջ պատմութիւններ է պատմում նրանց իր կեանքից, արդարեւ այնպիսի անմեղ պամասութիւններ, որ նրանց կարելի էր զետեղել հորթերի ու գառների ընտանեկան լրազրի մէջ։ Կասակ է անում նրանց հետ, իսկ եղները ուղիղ որ քիչ է մնում պատասխանի փոխարէն ժպտան նրան։ Նրանք հասկանում են, երբ իրանց քշում են, երբ հրամայում են չգնալ, երբ լիտ են դարձնում վարսակի դաշտից։ Եւ եղները զանազան բնաւորութիւն են ունենում։ Կան նրանց մէջ որ համբերատար են, չարքաշ, ջանասէր, հաւատարիմ, կան լամառներ ուտելիս, ծովեր, կռուասէրներ, գեղեցիկ սեռի ետելիք քաշ եկողներ։

Այն գիշերից, երբ խրտուիլակը մօտեցաւ Բարբէլի պատուհանին, մենք մազոտ շունք ենք պահում։ Մի վլասուած գիւղացուց ստացանք, որ գնաց աշխատելու գործարանում։ Մի շաբաթ շունք շղթալուած էր, լետոյ ընտելացաւ մեղ և կարելի եղաւ շղթաներն արծակել։ Մեր շանը Բիսմարկ են կանչում, և նա իր անուան արժանի գործ է կատարում, խելացի է, հնարագէտ, հսկոր։ Վայն եկել է նրա ծեռքից շրջմոլիկներին։ Կասկածաւոր մարդուն նա իսկոն ճանաչում է։ Երբեմն նա զգուշութեամբ լիզում է Որօսէրլի հիւանդ ծեռքը և այդ ժամանակ նրա շերմ գալլանման աչքերը դառնում են մեղմ,

սիրող և կարեկցութեամբ յարւում են լսեղն պատանու վրայ:

Մի ժամանակից ի վեր չորս եղ և երկու հորթ որոշեցին ընդհանուր արօտատեղ, սարն ուղարկելու Մի հորթիկ—Թարբէլի սիրելին էր, այս պատճառով էլ սրտառուչ մնաս բարեւ տեղի ունեցաւ: Ես մսուրի ետև թաքիացալ, որ լսեմ ամեն բան: Նա երկար ժամանակ ծեռք էր քսում հորթի այտերին, յետոյ սանդրեց նրան նոր բսնող եղջիւրների մէջտեղը և նրա պուկոր զարդարեց եղենեալ ճիւղերով: Իսկ յետոյ սկսեց ցածր ծախով խօսել. Անցեալ տարի, լիշում ես: Մենք՝ ի միասին սար էինք գնում, երկուսս էլ գլխներիս պսակ դրած: Դու կզարծանած, երբ աշունքին տուն վերադառնաս:

Հորթի աչքերը զարմանք այտալայտեցին:

— Չդիտեմ, թէ ինչ է պատահում ինձ, շշնչաց աղջիկը և նրա դէմքը բոլորովին փօխւում է: — Չդիտեմ, ուրախանան թէ ախրեմ: Նա դրէեց հորթի վիզը և այտը կպցը նրան:

Հորթը այնքան էլ լաւ չէ ըմբռնում:

— Ես ալնպէս եմ ամաչում, որ կուզենալի գետինն անցնել:

Իսկ հորթը անտարբեր է. ճար չկալ, պէտք է համբերել:

— Ամենից աւելի ես եմ տանջլում հօր և մօր փօխարէն:

Հորթը. — Նրանց համար այս արդէն երեկի նորութիւն չէ:

— Այսուամենալիւ ես այնքան լաւ եմ; ալնպէս երշանիկ:

Հորթը. — ի հարկէ, եթէ մի էակի մէջ երկու սիրտ է բարախում:

— Երանի՛ թէ ես Գլինդօին ալնպէս կարողանալի փաղաքշել, ինչպէս փաղաքշում եմ քեզ:

Նա ցանկութեամբ փալիքալում է հորթին, իր մազերը թափւում են նրա զիսի վրայ: Յետոյ նա մտածմաւնքի մէջ է ընկնում և աղօթք է մրմնչում, որից ես լսում եմ միայն հնատևեալ բառերը... եթէ նա չլինէր, ես կարող էի մեռնել իբրև անարատ կոյս...

Ինձ թւում էր, որ ես երազումն եմ, և ամաչում էի, որ ականջ էի դրել:

Ես ու Ռօխէրլը անասունները արօտ քշեցինք: Հորթը

մի տեսակ սրբազն առարկայ էր երևում։ Բայց ես Ռօխէրլին ոչինչ չասի։ Նա ուրախ էր, նոյն իսկ երգում էր, բայց յանկարծ լոեց։ Ճանապարհը զառիվեր էր և այն տեղից հեռուում այն պիսի հրաշալի տեսարան էր բացւում, որ ես վախենում էի թէ ինչպէս Ալմդալում ճանապարհորդներ չշատացան։ Բարերախտաբար, ճանապարհ չկար այնտեղ հասնելու։ Մեր արօտատեղը, ուսուցչի խօսքով, գտնւում է 1700 ոտնաչափից աւելի բարձրութեան վրալ։ Ակնտեղ դեռ էլի բնում են սօսիներ, բայց նրանց բուրաւէտ ճիւղերը բոլորն էլ ուղղուած են մի կողմ։ Հովիւների խրճիթները կառուցուած են փոքրիկ ծմակներում և արօտատեղերը ծածկուած են քարերի գորշ կտորատանքներով։ Հովիւներն այնտեղ ապրում են ամենանակալեատական կերպով, առանց վախենալու ոչ քամուց, ոչ անձրեից, ոչ ծիւնից, որ հազուազիւտ չէ նոյն իսկ լույս ամսին։ Մեղ հետ միասին միւտ կողմերից էլ երևացին հովիւներ և անասնապահներ, դարձեալ անասունների հետ։ Հնչում էին կովերի, հորթերի զանդակները և կովերը մայում էին, մարդիկ երգում, ծալներ արձակում, փողեր փչում—այս ամենը կեանքի բոլորովին նոր հօսանք էր ինձ համար։ Ռօխէրլն անդամ զուարթացաւ և սկսեց սիրախօսել Կուլմբօկի ուրախ, կորադէմք աղջկայ հետ...

Թարգմ. Օր. Ն. Աղամենաց

(Կը շարունակուի)